ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 342-Ա

ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով, հիմք ընդունելով իրավախախտ Արթուր Պողոսյանի ներկայացրած «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական իրավախախտման համար նշանակված վարչական տուգանքի 2023թվականի հունիսի 6-ի թիվ 002135 վճարման անդորրագիրը և վարչական հանձնաժողովի 2023թվականի հունիսի 7-ի արձանագրությունը. ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արթուր Պողոսյանի նկատմամբ 2023 թվականի հունիսի 7-ին հարուցված վարչական վարույթը կարճել:
2. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում azdar.am կայքի և/ կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հունսիսի 7
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 343-Ա

ՎԱՐԴԱՆ ՀՐԱՉԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ՄԱՐԻՆԱ ՎԱՉԱԳԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ, ԶՈՀՐԱԿ ՎԱՐԴԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԵՎ ՀՈՒՆԱՆ ՎԱՐԴԱՆԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2022 թվականի մայիսի 19-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի մայիսի 18-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023QBFZT5) և հողամասի համասեփականատեր Վարդան Հրաչի Հովսեփյանի 2023 թվականի մայիսի 24-ի N 1844 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի Չարենցի փողոցի 4 հասցեում գտնվող Վարդան Հրաչի Հովսեփյանին, Մարինա Վաչագանի Հովսեփյանին, Զոհրակ Վարդանի Հովսեփյանին և Հունան Վարդանի Հովսեփյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-030-0021-0002 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 40,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց բնակելի տունը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ՋԻՎԱՆ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր կիսակառույց բնակելի տան համար կազմում է 1422 դրամ, վճարման ենթակա

ընդհանուր գումարը կազմում է 57 875,40 (հիսունյոթ հազար ութ հարյուր յոթանասունհինգ դրամ քառասուն լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի Բաղրամյան գյուղի 900325003524 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հունիսի 08

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 344-Ա

ԳԵՂԱՄ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի ա) և բ) ենթակետերով, նկատի ունենալով, որ հողամասն ընգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «ՍԵՅՍՄՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից 2023 թվականի մայիսի 31-ին տրված շենքի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի մայիսի 29-ին տրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023LM3G6A), հողամասի սեփականատեր Գեղամ Ռուբենի Սարգսյանի 2023 թվականի հունիսի 5-ի N 1982 դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Երևանյան փողոցի 1-ին փակուղի 9 հասցեում գտնվող Գեղամ Ռուբենի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0103-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա կառուցված 4,7 քառակուսի մետր արտաքին մակերեսով պահեստը, 95,6 քառակուսի մետր մակերեսով ծածկը, 3,3 քառակուսի մետր արտաքին մակերեսով զուգարանը, 12,0 քառակուսի մետր արտաքին մակերեսով զրուցարանը և 2,6 քառակուսի մետր մակերեսով պարիսպը, համաձայն համապատասխան որակավորում ունեցող անձի՝ «ԱՎԱԳ ԱՎԱԳՅԱՆ ԳԱԳԻԿԻ» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծի:

2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետր պահեստի, ծածկի, զուգարանի, զրուցարանի և պարսպի համար կազմում է 1389,6

դրամ, վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 164 250,72 (հարյուր վաթսունչորս հազար երկու հարյուր հիսուն դրամ յոթանասուներկու լումա) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառական վարչության Փարաքար համայնքի 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023թ. հունիսի 08

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒՆԻՍԻ 2023 թվականի N 345-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 38-րդ և 39-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 21-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի՝ Մարգարիտա Ավետիսի Բոյմուշակյանի 2023 թվականի հունիսի 6-ի թիվ 2012 դիմումը՝ իր անչափահաս երկու երեխաներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի 0.11 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, հողամասի բաժնեմասը օտարելու վերաբերյալ, հիմք ընդունելով Փարաքար համայնքի <<Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի>> 2023 թվականի հունիսի 08-ի թիվ 13 արձանագրությունը: ***Որոշում եմ՝***

1. Թույլատրել Մարգարիտա Ավետիսի Բոյմուշակյանին /ծնված՝ 24.10.1991թ., անձնագիր՝ AR 0665611, տրված 19.04.2018թ., 008-ի կողմից/ կնքելու իր երկու անչափահաս երեխաներին՝ Ավետիս Ռոբերտի Մելքոնյանին /ծնված 21.07.2014թ., ծննդյան վկայական ԱԲ N 366068/, Եվանգելիա Ռոբերտի Մելքոնյանին /ծնված 23.02.2017թ., ծննդյան վկայական ԱԲ N 554257/ պատկանող 04-094-0307-0009 կադաստրային ծածկագրով, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ վկայականն N 11022020-04-0049) 0.11 հա մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ վարելահող, հողամասի օտարելու գործարք՝ ի շահ անչափահաս երեխաների:
2. Հսկողություն սահմանել անչափահաս երեխաների՝ Ավետիս Ռոբերտի Մելքոնյանի /ծնված 21.07.2014թ., ծննդյան վկայական ԱԲ N 366068/, Եվանգելիա Ռոբերտի Մելքոնյանի /ծնված 23.02.2017թ., ծննդյան վկայական ԱԲ N 554257/ մոր՝ Մարգարիտա Ավետիսի Բոյմուշակյանի /ծնված՝ 24.10.1991թ., անձնագիր՝ AR 0665611, տրված 19.04.2018թ., 008-ի կողմից/ նկատմամբ:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Փարաքար համայնքի ղեկավարին՝ որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամսվա ընթացքում կամ դատական

կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարգարիտա Ավետիսի Բոյմուշակյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ**

2023 թ. ՀՈՒՆԻՍԻ 08
գ.Փարաքար